

# ՎԱՀԱԳՆԻ ԾՆՈՒՆԴԸ

(Բալլադա)

Երկնեց երկին և երկիր,  
Երկնեց և ծով ծիրանի,  
Եւ եղէգնիկը կարմիր  
Երկնեց ծովում ծիրանի։

Ծուխ է դուրս գալիս եղեգան փողից,  
Բոց է դուրս գալիս եղեգան փողից,  
Բոց է պատել կարմիր եղէգնիկ,  
Բոց է դարձել և ծով ծիրանի,  
Կարմիր բոցիցն ահա մի մանկիկ,  
Վահագն ահա—մանուկ գեղանի։

Բոց մորուքով,  
Հուր չրթունքով,  
Հուր հեր գլխին—հրեղէն պսակ,  
Եւ աչերն են զոյգ արեգակ։

Ալեծուփ ծովի ծիրանի ալիք  
Գնում են, գալիս, ծեծում են ափունք.  
Ահեղամուռնչ գոռում է մանկիկ,  
Սաստում են արեացն հրրավառ չրթունք։  
Վահագն ծնաւ, լռեցէք, ալիք.  
Դու, ծովահալած, դադար առ, մրրիկ.  
Թւերն սակեհուռ, հրահեր բաշով  
Նժոյզը տակին՝ սլացաւ վերև—  
Երեսըդ ծածկիր համեստ շղարշով,  
Տես՝ ո՞վ է գալիս, և դու, հուր-արև։  
Գլուխդ արևոր, քաջածին Մասիս,  
Դու էլ խոնարհիր, Վահագն է գալիս...

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ